ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ (1928-2016)



2016 թ. հունվարի 30-ին կյանքին հրաժեշտ տվեց մեծ պատմաբան, հասարակական-քաղաքական և ազգային հայտնի գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը:

Նա ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիսում: Քաղաքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որը գերազանց առաջադիմությամբ ավարտել է 1952 թ.: Աշխատանքային մկրտությունը ստացել է հարազատ շրջանում՝ գործուղվելով ծննդավայր որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: Հաջորդ տարվանից նա աշխատանքի է անցել ՀԿԿ Գորիսի շրջկոմում նախ որպես հրահանգիչ, այնուհետև՝ բաժնի վարիչ: 1957 թ. ընտրվել է նույն շրջկոմի գաղափարական գծով քարտուղար:

1959 թ. Հ. Սիմոնյանը մեկնել է Մոսկվա և ընդունվել ԽՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա, որն ավարտել է 1962 թ. և նույն տարում այնտեղ պաշտպանել թեկնածուական թեզ: Վերադառնալով Երևան՝ նա աշխատանքի է անցել Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում. 1962-1966 թթ.՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1977-1990 թթ.՝ որպես տնօրեն: 1966-1977 թթ. նա աշխատել է ՀԿԿ կենտկոմում՝ իբրև դասախոսական խմբի ղեկավար, այնուհետև՝ բաժնի վարիչի առաջին տեղակալ, եղել է նաև վարիչի պաշտոնակատար: 1990-1991 թթ. Հ. Սիմոնյանը վարել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991-1994 թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ: 1994-2006 թթ. նա ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդականն էր, միաժամանակ 1999-2003 թթ. ղեկավարել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը: 1969 թ. Հ. Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական թեզ, իսկ մեկ տարի անց ստացել պրոֆեսորի կոչում: Գիտության մեջ ներդրած ավանդի համար 1986 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ:

Հ. Սիմոնյանն անգնահատելի վաստակ ունի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության բազմաթիվ հիմնահարցերի խորը ուսումնասիրության ասպարեզում: Նա հեղինակել է ավելի քան 40 մենագրություն և շուրջ 400 գիտական հոդվածներ: 1960-ական թթ. նրա գիտական հետաքրքրությունները

կենտրոնացած են եղել հայկական սփյուռքի, այնտեղ գործող հայ քաղաքական ուժերի գործունեության, Խորհրդային Հայաստանի հանդեպ նրանց վերաբերմունքի վրա: 1968 թ. հրատարակվում է նրա «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը: 1970-ական թթ. սկզբներից Հ. Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում գտնվել են քաղաքական-փիլիսոփայական բնույթի հիմնահարցերը: Նա ընթերցողներին է ներակայացրել «Ինդուստրիալ հասարակության տեսությունները» (1973), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» երկհատոր (1977), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982) մենագրությունները, որոնցում ներկայացված են բուրժուական գաղափարական տարբեր ուղղությունների ծագման ու զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ-դասակարգային էությունը: Նա հանդես է եկել նաև Հայաստանի և Այսրկովկասի կոմունիստական շարժման պատմությանը նվիրված բազմաթիվ հրապարակումներով, եղել «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (1967), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր» (Թբիլիսի, 1971, ռուսերեն) կոլեկտիվ աշխատությունները ստեղծողներից մեկը:

1970-ական թվականների վերջերից Հ. Սիմոնյանը ուշադրությունը բևեռել է բացառապես XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ժողովրդի ազատագրական շարժումների, Հայոց ցեղասպանության պատմության և այդ թեմաներին առնչվող թուրքական գաղափարախոսության հիմնախնդիրների ուսումնասիրության վրա: Այս հարցերին են վերաբերում «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1980), «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991) մենագրությունները: Այնուհետև նա հրատարակել է «Անդրանիկի ժամանակը» (1996) մեծարժեք երկհատոր ուսումնասիրությունը, որը միանգամայն նոր խոսք է ազգային հերոսի կյանքի ու մարտական անցած ուղու մասին, քանի որ այնտեղ շրջանառվում են հարյուրավոր նորահայտ արխիվային փաստաթղթեր և նյութեր: 2003-2013 թթ. Հ. Սիմոնյանը հրատարակել է «Ազատագրական պայքարի ուղիներում» հիմնարար աշխատությունը՝ ամփոփված հինգ գրքերում, որտեղ փաստական հարուստ նյութերի վերլուծության հիման վրա համակողմանիորեն ներկայացրել է XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազն ընկած ժամանակահատվածում Արևելյան և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները: Այս մենագրությունը 2013 թ. արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ մեծ ներդրում է Հ. Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» (2009) մենագրությունը, որը թարգմանվել է անգլերեն և հրատարակվել Մեծ Բրիտանիայում (2012): 2014 թ. նա հրատարակել է նաև «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը» մենագրությունը:

Հ. Սիմոնյանը գիտական զեկուցումներով հանդես է եկել ոչ միայն Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, այլև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Ճապոնիայում, Լիբանանում՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները:

Նրա աշխատություններից մի քանիսը լույս են տեսել Չեխոսլովակիա-

յում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում:

Հայ ժողովրդի նորագույն շրջանի ազգային-ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից Հ. Սիմոնյանը արցախյան համաժողովրդական շարժման բովում էր, նրա տասնյակ հոդվածներն ու հրապարակային ելույթները խանդավառում էին մեր հայրենակիցներին: 1990-1995 թթ. լինելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ նա հեղինակել է և քննարկման ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր, նպաստել Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակման ու կայացման գործընթացին:

1964 թվականից Հ. Սիմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության և փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության այլ բուհերում, իր գիտելիքներն անմնացորդ նվիրումով հաղորդել ուսանողությանը, ջանացել երիտասարդ սերնդի մեջ ներարկել ազգային շահի գիտակցում ու պետական մտածողություն: Նրա անմիջական ղեկավարությամբ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դասախոսներից կազմված հեղինակային խումբը 2000 թ. հրատարակեց հայոց պատմության բուհական ծրագիրն ու դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Հ. Սիմոնյանի խմբագրությամբ պատրաստվեց և 2012 թ. հրատարակվեց հայոց պատմության բուհական դասագրքի լրամշակված և ամբողջացված տարբերակը, որի ռուսերեն հրատարակությունը լույս տեսավ 2014 թ.:

Հ. Սիմոնյանը մինչև կյանքի ավարտը երիտասարդական եռանդով ու ավյունով էր ծառայում իր հայրենիքին և հարազատ ժողովրդին: Նույնիսկ նրա կյանքի վերջին շրջանը հագեցած էր ստեղծագործական բեղուն գործունեությամբ. հետմահու լույս տեսան նրա «Անդրանիկի քաղաքական արդարացման պատմությունից» ռուսերեն մենագրությունը և «Ինչպես եղել է…» հուշերի գիրքը: Ռուսաստանի Դաշնությունում շուտով կհրատարակվի նրա «Ռուսական կայսրությունը և հայկական հարցը Առաջին աշխարհամարտի նախօրյակին» մեծածավալ ուսումնասիրությունը, իսկ Իրանում՝ «Հայերի դերը Իրանի սահմանադրական հեղափոխության մեջ» պարսկերեն աշխատությունը: Ցավոք, կիսատ մնացին նրա՝ Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովին և պարսիկ մեծ պոետ Նիզամուն նվիրված աշխատությունները:

Զարմանք և հիացմունք էին պատճառում Հ. Սիմոնյանի աշխատասիրությունն ու աշխատունակությունը: Նա ուներ մտավորականի բարձր կերպար՝ պարզ, անկեղծ ու բարյացակամ: Նրա մարդկային առաքինի հատկանիշներից էին համեստությունը, անսահման բարությունը, ուղղամտությունը, ազնվությունը և անմնացորդ նվիրվածությունն աշխատանքին: Հ. Սիմոնյանի գիտակրթական բեղուն գործունեությունը գիտությանն անմնացորդ նվիրյալի դաստիարակչական փայլուն օրինակ էր գիտակրթական լայն հանրույթի, առավելապես երիտասարդության համար:

ԵՊՀ ռեկտորատ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
Պատմության ֆակուլտետ
«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն»
հանդեսի խմբագրական խորհուրդ